Սահմանումներ

Վտանգ՝
երևույթ, գործընթաց, գործունեություն, իրադարձություն, նյութ, որը կարող է հանգեցնել մարդկային զոհերի, նրանց առողջության վատթարացման, կենսաապահովման միջոցների, գույքի և նյութական կորուստների, սոցիալական, տնտեսական գործունեության և ծառայությունների խաթարումների, բնապահպանական և այլ վնասների:

Աղետ՝

բնակչության և պետության, համայնքի կամ հասարակության բնականոն կենսագործունեությունը խաթարող արտակարգ իրավիճակ, որը հանգեցրել մարդկային զոհերի, մարդկանց առողջության և շրջակա միջավայրի զգալի վնասի, խոշոր նյութական վնասների, որի վերացումը գերազանցում է սեփական ուժերով հաղթահարելու կարողությունները:

Աղետի ռիսկ՝

որոշակի տարածքում որևէ ժամանակահատվածում վտանգի կամ վտանգավոր երևույթի աղետալի ազդեցության հավանական չափն է՝ արտահայտված կյանքի, առողջության, կենսաապահովման միջոցների, գույքի հնարավոր կորուստներով, շրջակա միջավայրի վիճակի վատթարացմամբ և ծառայությունների խափանմամբ: